Մամլոյ Յաղորդագրութիւն

Սոյն թուականի Ապրիլի 24-ին Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի (ԳԿԽ) եւ Գերմանիոյ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչման կենտրոնական յանձնախմբի նախաձեռնութեամբ Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքի Սուրբ Պողոսի(Փաուլս) եկեղեցում տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչման արարողութիւն:
Ոգեկոչման արարողութեանը ներկայ էին Գերմանիայում ՀՀ դեսպանի տեղակալ Աշոտ Սմբատեանը, Հեսսենում հաւատարմագրուած դիւանագէտներ , ՀՀ պատուաւոր հիւպատոս, Լիբանանի պատուաւոր հիւպատոս, Գերմանիոյ Ասորիների Միութեան նախագահ, միջ-եկեղեցական ներկայացուցիչներ, գերմանացի մտաւորականներ եւ 1000-ից աւելի ներկաներ՝ ժամանած Գերմանիայի տարբեր վայրերից:

Ձեռնարկի բացումը կատարեց Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի ատենապէտ Դտ.Նազարեթ Աղեկեանը: Աղեկեանն իր խօսքում նշեց թէ՝ «Հայոց Ցեղասպանութեան ճանաչման պահանջը առաջին հերթին ուղղուած է Թուրքիոյ պետութեանը: Այն իր պատմութեան մաս պէտք է համարի Ցեղասպանութիւնը, դատապարտի եւ վերապրողներից ներողութիւն խնդրի: Պէտք է պատասխանատու լինի իր պատմական յանցանքի, ինչպէս նաեւ վերապրողների եւ նրանց շարունակող սերունդների համար»:Դտ.Աղեկեանը շարունակեց՝«այս առիթով կուզէի շնորհակալութիւն յայտնել Գերմանիոյ Դաշնութեան Նախագահ Դտ. Եօախիմ Գաուկին եւ Գերմանիոյ Բունդեսթագի նախագահին ճշմարտութիւնը գիտակցելու եւ կոտորածները Ցեղասպանութիւն կոչելու համար»:

Ողջոյնի խօսք արտասանեց Գերմանիայում ՀՀ դեսպանի տեղակալ պրն. Աշոտ Սմբատեանը պատմական ակնարկ նետելով Հայոց Ցեղասպանութեան վրայ նշեց որ այս դէպքից 100 տարի անց հայ ժողովուրդի պայքարը մի նոր եւ աւելի եռանդուն փուլ է թեւակոխում : Օրուայ խօսքը փոխանցեց Քոսթանց համալսարանից պրոֆ. Դտ. Ալէիդա Ասսմանը:

Vorsitzender	**Bankverbindung**	**Stellvertretende Vorsitzende**	Madlen Vartian
Dr. Nazareth Agheguian	Sparkasse Leverkusen	**Kassenwart**	Samwel Lulukyan
Tel: +49 (0) 178-81 81 002	IBAN: DE12375514400118365543	**Schriftführerin**	Tamar Hamouchian
madlen.vartian@zentralrat.org	BIC: WELADEDLLEV	**Jugendbeauftragte**	Vehanoush Davoodian

Գեղարուեստական բաժնում համերգով հանդէս եկան յանրայայտ մենակատարներ Կարինէ Բաբաջանեան եւ Միքայէլ Բաբաջանեան՝ ընկերակցութեամբ դաշնակահարուհի Անահիտ Տէր-Խաչատրեանի: Ձեռնարկը եզրափակուեց Թեմիս Բարեջան Առաջնորդ Գարեգին Պէքճեան-ի Հոգեհանգստեան աղօթքով:

ԳԿԽ-ի Վարչութիւն

Ֆրանկֆուրտ 28.04.2015

Vorsitzender	**Bankverbindung**	**Stellvertretende Vorsitzende**	Madlen Vartian
Dr. Nazareth Agheguian	Sparkasse Leverkusen	**Kassenwart**	Samwel Lulukyan
Tel: +49 (0) 178-81 81 002	IBAN: DE12375514400118365543	**Schriftführerin**	Tamar Hamouchian
madlen.vartian@zentralrat.org	BIC: WELADEDLLEV	**Jugendbeauftragte**	Vehanoush Davoodian